ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "АРМАН-ЕРЕМ"
RA MARZ GEGHARKUNIK LTD "ARMAN-EREM"

ք.Գավառ, Արծվաքար թաղ., հեռ. (093) 19-66-68
г.Гавар. уч. Арцвакар тел., (093) 19-66-68
c.Gavar. st.Artcvacar, tel. (093) 19-66-68
էլ. փոստ.arman-erem@mail.ru

№ 03-15/116

«10» սեպտեմբերի 2015թ.

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝
տիկին Ս. Ղավթյանին

«ԻԶՆԱԽ» ՍՊԸ տնօրեն՝
պարոն Հ. Սիմոնյանին

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության նախարարության լիցենզիա № 11945) դիտարկելով «ՀՀ Տավուշի մարզի Ճաղկավան (Իջևանի շրջան) համայնքի դպրոցի վերանորոգում» աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, երաշխավորում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 6302,29 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Առդիր 2 թերթ:

Տնօրեն՝ Յու. Ավետիսյան

«Արման-Երեմ» ՍՊԸ

Հաստատում եմ՝
«10»սեպտեմբերի 2015թ.

Տնօրեն՝
Յու. Ավետիսյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ *«ՀՀ Տավուշի մարզի Ծաղկավան (Իջևանի շրջան) համայնքի դպրոցի վերանորոգում»* աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի

Պատվիրատու՝ Տավուշի մարզպետարան Նախագծող՝ «ԻՋՆԱԽ» ՍՊԸ

Նախագծման հիմք է ծառայում Ն.Ծաղկավանի գյուղապետարանի կողմից տրված թերությունների ակտը ինչպես նաև փաստացի ուսումնասիրության և չափագրության արդյունքները: Հաշվի են առնված նաև պատվիրատուի բոլոր առաջարկները և պահանջները:

Նախագծով նախատեսված է՝

1. Առաջին մասնաշենքի 1-ին հարկի փայտե պատուհանների (9 հատ ) փոխարինում մ/պլ պատուհաններով,մուտքի փայտե դռան փոխարինում ալյումինե դռնով:
2. Առաջին մասնաշենքի 2-րդ հարկի փայտե պատուհանների (2 հատ ) փոխարինում մ/պլ պատուհաններով,
3. Մուտքի դռան վրա հովհարի կառուցում,
4. Երկրորդ մասնաշենքում ջեռուցման կաթսայի տեղադրում 32կՎտ (FONDITAL) մակնիշի 1 հատ
5. Ջեռուցման ներքին ցանցի մոնտաժում d = 32,25 և 20մմ տրամագծի մ/պլ խողովակներով,
6. Պատերի անցումներում նախատեսված է պաշտպանիչ պատյանի տեղադրում մետաղական խողովակներից d = 40 և d = 32 մմ տրամագծի,
7. Ալյումինե մարտկոցների տեղադրում H=500մմ չափի,
8. Արտաքին և ներքին ջրամատակարարման ցանցի անցկացում պոլիպրոպիլենային խողովակով d = 25x2,3մմ տրամագծի
9. Արտաքին և ներքին կոյուղու ցանցի անցկացում պոլիպրոպիլենային խողովակով d = 110մմ և d = 50մմ տրամագծի
10. Արտաքին կոյուղու դիտահորի տեղադրում D=1000, H=1000մմ հավաքովի ե/բ էլեմենտներից թուջե մտոցով
11. Խոհանոցում՝ 2 տեղանի խոհանոցակոնք ոտնակով խառնիչով

Ներկայացված է նախահաշիվ *6302,29* հազ. դրամ գումարով:

Նախահաշվային փաստաթղթերը կազմված են շինարարական աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների հիման վրա, որը հաստատված է թիվ 05 03.05.2008թ. հրամանով ՀՀ Քաղաքաշինության Նախարարության կողմից:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշվի հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը՝ 2049,28 և մեքենաների շահագործման ինդեքսը՝ 2900,39: Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 221835 դրամ: Նյութերի արժեքն ընդունված է 2015թ. №06 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով: Լիմիտավորված ծախսերը հաշվարկված է ըստ տվյալ պահին գործող նորմատիվների:

Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

Շինարարական նյութերի արժեքին տրված է՝

ա - Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից - 1.132

բ - Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից - 1.05

գ - Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից - 1.02

Նախագծանախահաշվային փաստաթղթերում նկատված թերությունները վերացվել են փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով:

*Եզրակացություն:*

« ՀՀ Տավուշի մարզի Ծաղկավան (Իջևանի շրջան) համայնքի դպրոցի վերանորոգում » աշխատանքների նախահաշվային փաստաթղթերը երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Նախահաշվային արժեքը կազմում է *6302,29* հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գլխավոր ճարտարագետ Մ. Աղդալյան

Գլխավոր մասնագետ Ա. Գրիգորյան